ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 21-Լ

«07» 05 2026 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N 38 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 11-ի N 31 հրամանում լրացում կատարելու մասին» 2026 թվականի ապրիլի 10-ի N 16-Լ հրամանը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ ««Հայաստանի Հանրապետության դատախազություն» և «Դատախազության պատվավոր աշխատող» կրծքանշանների, «Իրավակարգի ամրապնդման համար» և «Համագործակցության ամրապնդման համար» մեդալների նկարագրությունն ու ձևերը, դրանց վկայականների ձևերը, ինչպես նաև խրախուսման ներկայացնելու միջնորդության և շնորհակալագրի ձևերը հաստատելու մասին» 2015 թվականի հուլիսի 19-ի N 38 հրամանը լրացնել նոր՝ հավելված 5.1-ով՝ հետևյալ բովանդակությամբ.

«**ՀԱՎԵԼՎԱԾ 5.1.**

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի 2026 թվականի
մայիսի -ի թիվ հրամանով

Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի կողմից «Հայաստանի Հանրապետության դատախազություն» կրծքանշանով պարգևատրելու դեպքում տրվող վկայականի ձևը

(կրծքանշանի պատկերը) պարգևատրված է «ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» կրծքանշանով	ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ _____ թ. _____(ամիս, ամսաթիվ) թիվ _____ հրամանով անուն _____ հայրանուն ազգանուն _____ ՀՀ դատախազության գլխավոր քարտուղար _____ (անուն,ազգանուն, ստորագրություն և կնիք)

»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ